ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2026 թվականի թիվ 51 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 180-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն և 2026 թվականի փետրվարի 19-ի թիվ 180-Ն որոշումն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետի զեկուցագիրը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի փետրվարի 19-ի թիվ 180-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 1-ին եռամսյակի համար հատկացված 189000,0 հազար դրամ գումարից՝ 102811,466 հազար դրամ վճարել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, իսկ 86188,534 հազար դրամ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին՝ մարզի սահմանամերձ համայնքների բնակավայրերի էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող բնակիչ-բաժանորդների կողմից 2025 թվականի դեկտեմբեր, 2026 թվականի հունվար և փետրվար ամիսներում սպառած էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցման նպատակով:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել որոշման կատարումը:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-03-25 12:09:48 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026թ. մարտի 25
ք. Իջևան